

# ! ? օրվա թերթ

## DAILY

DAY 3, TUESDAY, JULY 14



### Battle for the Soul

### Պայքար՝ հոգու համար

>> 3  
**Քերմանական  
նոր կին**

>> 4  
**«Շուկայի  
օրենքը»,  
«Ձմռան  
վերջը»**

**Հարցազրույց.  
Ռոբեր  
Գեդիգյան**

>> 5  
**Interview  
Robert  
Guédiguian**

>> 6  
**Embrace  
of the Serpent:  
Imperial  
Wanderlust**

>> 7  
**Apricot Stone:  
As long as it  
Takes**



# 2 | Ծրագիր/program

## հուլիսի 14 july

Մոսկվա կինոթատրոն,  
Կապույտ դահլիճ/  
Moscow Cinema, Blue Hall

10:00



**Շուկայի զեղծը/The Measure of a Man** Ստեֆան Բրիզե/Stéphane Brizé  
*Fra, 93'/FC*  
Lang.: French, Subt.: English

12:00, 20:00

**Զմռան վերջը/End of Winter** Կիմ Դե-հուան /Kim Dae-hwan  
*Kor, 99'/FC*  
Lang.: Korean, Subt.: English

14:00



**Մեր պետականությունը/Our Nationhood** Ալանիս Օբոմսաուին/Alanis Obomsawin  
*Can, 97'/NA*  
Lang.: English, Subt.: Armenian

16:00



**Գիշեր և մշուշ/Night and Fog** Ալեն Ռենե/Alain Resnais  
*Fra, 32'/NA*  
Lang.: French, Subt.: English and Armenian  
**Մարդն իր ժամանակի առաջ/A Man Before His Time** Հենրի Չար/Henri Charr  
*USA, 60'/NA*  
Lang.: English, Subt.: Russian and Armenian

18:00



**Շների կղզին/Barking Island** Սերժ Ավետիսյան /Serge Avédikian  
*Fra, 15'/WE*  
Lang.: no dialogues, Subt.: no subtitles  
**Մենք/We** Արտավազդ Փելեշյան/Artavazd Peleshyan  
*Arm, 27'/WE*  
Lang.: no dialogues, Subt.: no subtitles

22:00



**Օձի գրկում/Embrace of the Serpent** Սիբո Գեռա/Ciro Guerra  
*Col, 122'/FC*  
Lang.: Spanish/Amazonian languages, Subt.: English and Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Կարմիր դահլիճ/  
Moscow Cinema, Red Hall

10:00

**Ճանապարհ/The Road** Գագիկ Մադոյան/Gagik Madoyan  
*Arm, 10'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English  
**Նարնջագույն բաճկոնով մարդը/The Man in the Orange Jacket** Հայկ Կարապետյան/Aik Karapetian  
*Lva/Est, 71'/AP*  
Lang.: Latvian/Russian, Subt.: English and Armenian

12:00



**Ինչպես գիրանալ առողջ եղանակով/Getting Fat in a Healthy Way** Գևորգ Ասլանյան/Kevork Aslanyan  
*Bgr, 22'/AP*  
Lang.: Bulgarian, Subt.: English and Armenian

**Բժիշկը/The Doctor** Աննա Գորոյան/Anna Goroyan  
*Rus, 24'/AP*  
Lang.: Russian, Subt.: English and Armenian

**Սանդվիչ կղզու մարդը/The Sandwich Island Man** Լևոն Մինասյան/Levon Minasian  
*Fra, 26'/AP*  
Lang.: French, Subt.: English and Armenian

14:00

**Հերոս պիոներները/Pioneer Heroes** Նատալյա Կուդրյաշովա/Natalya Kudryashova  
*Rus, 116'/DAB*  
Lang.: Russian, Subt.: English and Armenian

16:30

**Սերը խելահեղություն է/Love is Folly** Վասիլ Գենդով/Vasil Gendov  
*Bgr, 11'/YP*  
Lang.: no dialogues, Subt.: no subtitles  
**Դասը/The Lesson** Քրիստինա Գրոզևա, Պետար Վալչանով/Kristina Grozeva, Petar Valchanov  
*Bgr/Grc, 107'/YP*  
Lang.: Bulgarian, Subt.: English and Armenian

19:00



**Կամուրջ դեպի սահման/A Bridge to a Border** Ռոբ Նիլսոն/Rob Nilsson  
*USA, 90'/YP*  
Lang.: English, Subt.: Armenian

21:00

**Մենք երիտասարդ ենք, մենք՝ ուժեղ/We are Young, We are Strong** Բուրիան Քուրբանի/Burhan Qurbani  
*Deu, 128'/GNC*  
Lang.: German, Subt.: English and Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Փոքր դահլիճ 1/ Moscow Cinema, Small Hall 1

10:00



**Իմաստի ստեղծումը/The Creation of Meaning** Սիմոնե Ռասպիզարդա Կազանովա/Simone Rapisarda Casanova  
*Can/Ita, 90'/DC*  
Lang.: Italian, Subt.: English

12:00

**Արծաթագոծ ջուր. Սիրիայի ինքնակարը/Silvered Water, Syria Self-Portrait** Ուսամա Մոհամեդ, Վիամ Սիմավ Բեդիրքան/Ossama Mohammed, Wiam Simav Bedirxan  
*Fra/Syr, 92'/DC*  
Lang.: Arabic, Subt.: English

14:00



**Ձայներ լճից/Voices From the Lake** Մայքլ Հասկոյան/Michael Hagopian  
*USA, 87'/WE*  
Lang.: English, Subt.: Armenian

16:00

**Արծաթագոծ ջուր. Սիրիայի ինքնակարը/Silvered Water, Syria Self-Portrait** Ուսամա Մոհամեդ, Վիամ Սիմավ Բեդիրքան/Ossama Mohammed, Wiam Simav Bedirxan  
*Fra/Syr, 92'/DC*  
Lang.: Arabic, Subt.: English and Armenian

18:00



**Մեկ, երկու, երեք/One, Two Three** Արման Երիցյան/Arman Yeritsyan  
*Arm/Deu/Nor, 75'/AP, DC*  
Lang.: Armenian/Russian, Subt.: English

20:00

**Ատրապտանտիկա/Transatlantic** Ֆելիքս Դյուֆուր-Լապերիեր/Felix Dufour-Laperrière  
*Can, 72'/DC*  
Lang.: no dialogues, Subt.: no subtitles

21:30



**Երգը տարագրության մեջ/Singing in Exile** Նատալի Ռոսսետտի, Տուրի Ֆինոչիարո/Nathalie Rossetti, Turi Finocchiaro  
*Bel/Pol/Fra, 77'/WE*  
Lang.: English/French/Armenian/Turkish/ Polish, Subt.: English and Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Փոքր դահլիճ 2/ Moscow Cinema, Small Hall 2

10:00, 18:00

**Օտարը/The Stranger** Տաթև Հակոբյան/Tatev Hakobyan  
*Arm, 22'/SC*  
Lang.: Armenian, Subt.: English  
**Բեկորներ/Fragments** Ագա Վոշչինսկա/Agá Woszczyńska  
*Pol, 25'/SC*  
Lang.: Polish, Subt.: English  
**Էքսկուրսիա/Excursion** Ադրիան Սիտարու/Adrian Sitaru  
*Rom, 19'/SC*  
Lang.: Romanian, Subt.: English

12:00, 20:00


**Գետի զավակները/Children of the River** Խավիեր Մասիպե/Javier Macipe  
*Spa/Prt, 14'/SC*  
Lang.: Portuguese, Subt.: English  
**Շախու ընտանիք/Family for Sale** Սեբաստիան Պետրետի/Sébastien Petretti  
*Bel, 14'/SC*  
Lang.: French, Subt.: English

14:00

**Լիլա/Lila** Կարլոս Լասկանո/Carlos Lascano  
*Spa/Arg, 9'/SC*  
Lang.: no dialogues, Subt.: no subtitles  
**Մրջանաց/Ants Apartment** Թոֆիգ Ամանի/Tofigh Amani  
*Irq, 10'/SC*  
Lang.: Kurdish, Subt.: English

Սինեմա սթար/  
Cinema Star

19:00



**«Ֆիդելիո». Ալիսի ոդիսականը/Fidelio: Alice's Odyssey** Լյուսի Բորլեաու/Lucie Borleteau  
*Fra, 95'/FNC*  
Lang.: French, Subt.: English and Armenian

20:00

**Փյունիկ/Phoenix** Քրիստիան Փեցոլդ/Christian Petzold  
*Deu, 98'/GNC*  
Lang.: German, Subt.: English and Armenian

Հայաստան կինոթատրոն,  
Փոքր դահլիճ/ Hayastan Cinema, Small Hall

17:00

**1915** Կարին Հովհաննիսյան, Ալեք Մուսիբյան /Garin Hovhannisian, Alec Mouhibian  
*USA, 82'/AP*  
Lang.: English/Armenian, Subt.: Armenian and English  
**Հատանցում/Traversed** Ալեքս Իգիբաշյան, Էմիլի Մկրտչյան/Alex Igidbashian, Emily Mkrtchian  
*Arm, 26'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

19:00



**Մաս բարով, «Վոլգա»/Farewell Volga** Համլետ Վարդանյան/Hamlet Vardanyan  
*Arm, 24'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English



**Վերադարձ կամ մենք գոյություն ունենք/Return or We Exist** Արմեն Խաչատրյան/Armen Khachatryan  
*Arm, 52'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English  
**Բժիշկը/The Doctor** Աննա Գորոյան/Anna Goroyan  
*Rus, 24'/AP*  
Lang.: Russian, Subt.: English and Armenian

21:00



**Ճանապարհ/The Road** Գագիկ Մադոյան/Gagik Madoyan  
*Arm, 10'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English  
**Չքնաղ մի տեղ/Somewhere Beautiful** Ալբերտ Կոդագոլյան/Albert Kodagolian  
*USA/Arg, 75'/AP*  
Lang.: English/Spanish, Subt.: English and Armenian

Հայաստան կինոթատրոն,  
Մեծ դահլիճ/  
Hayastan Cinema, Big Hall

17:00



**Սիվաս/Sivas** Քասան Մյուժդեջի/Kaan Mujdeci  
*Tur/Deu, 97'/DAB*  
Lang.: Turkish, Subt.: English and Armenian

19:00

**Տեսս/Tess** Ռոման Պոլանսկի/Roman Polanski  
*Fra/UK, 186'/R*  
Lang.: English, Subt.: Armenian

Հայաստան կինոթատրոն,  
VIP դահլիճ/  
Hayastan Cinema, VIP Hall

10:30



**Բեն Զաքեն/Ben Zaken** Էֆրատ Բորնեմ/Efrat Corem  
*Only for Jury*  
*Isr, 92'/DAB*  
Lang.: Hebrew, Subt.: English

12:30



**Մարտ Սարուլու /Marat Sarulu**  
*Only for Jury*  
*Kgz, 168'/DAB*  
Lang.: Kyrgyz, Subt.: English

Երևանյան գիշերներ  
Պողոսյան այգիներում/  
Yerevan Nights at  
Poghosyan Gardens

21:00

**Մոսկվիչ, իմ սեր/Moskvich, My Love** Արամ Շահբազյան/Aram Shahbazyan  
*Arm/Fra/Rus, 87'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

# GOLDEN APRICOT DAILY

Խմբագիրներ՝ Յոսթ Բրոերեն, Արտուր Վարդիկյան  
Մշակատակագմ՝ Մարիսկա Գրեյվլենդ, Մարիկե Նյուտորփ  
Լուսանկարիչ՝ Մանե Հովհաննիսյան  
Սրբագրիչներ՝ Մարինե Վարախանյան, Ռիմա Աղեկյան  
Գիշերներ՝ Գայանե Գրիգորյան  
Գլխավոր խորհրդատու՝ Պիտեր վան Բյուերեն  
Տպագրված է «ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ-ում

Editors: Joost Broeren & Artur Vardikyan  
Staff: Mariska Graveland, Maricke Nieuwdorp  
Photographer: Mane Hovhannissyan  
Design: Gayane Grigoryan  
General Coaching Adviser: Peter van Bueren  
Printer: "NT Holding" Ltd.





# Վերանայելով դասնությունը...

**Փառատոնի «Գերմանական նոր կինո» ծրագիրը ներառում է վերջերս նկարահանված գերմանական հինգ ֆիլմ՝ թեմաների ու ժանանակաշրջանների մեծ ընդգրկումով: Նրանցից յուրաքանչյուրում նրբորեն միահյուսված են անձնական ու քաղաքականը:**

Բեռլինի պատի փյուզումը 1992 թվականին դեռևս դրականում է Արևելյան Գերմանիայի Ռուսոտոք քաղաքում: Բայց աշխարհն արագ է փոխվում. նախկին սովետական շենքերում հիմա տարբեր ազգության ներգաղթյալ մարդիկ են ապրում՝ վիետնամցիներ, գնչուներ: Երիտասարդների շրջանում գործարկությունն աճում է: Ո՞վ է մեղավոր...

Նորելուկ նեոնացիստներն օտարազգի «ներխուժողների» մեջ են տեսնում պատճառը՝ ինչպես կրահում ենք Բուրիան Բուրբանի «Մենք երիտասարդ ենք, մենք՝ ուժեղ» ֆիլմից: Սա ոճի մեծ զգացողությամբ նկարահանված մի դրամա է՝ հիմնված իրական դեպքերի վրա: Ֆիլմը պատմում է այն օրվա մասին, երբ միջառապական լարվածությունն իր կիզակետին է հասնում և զանգվածային անկարգություններ են սկսվում: Այս ամենը մենք տեսնում ենք երիտասարդ վիետնամուտի, տեղական ձախկողմյան քաղաքական

գործի և նրա նեոնացիստ որդու աչքերով՝ հիանալի սև ու սպիտակի ներքո:

Ծրագրում սա միակ ֆիլմը չէ, որտեղ ներկայացվում են 21-րդ դարի պատմական իրադարձությունները: Նշանավոր ռեժիսոր Քրիստիան Փեցոլդը իր «Փյունիկ» ֆիլմում Երկրորդ աշխարհամարտին առնչվող ու հաճախ անտեսվող մի հարց է բարձրացնում: Բնչ եղան այն մարդիկ, ովքեր փրկվեցին մահվան ճամբարներից ու տուն վերադարձան: Ֆիլմը Նեյի մասին է, ում դեմքն այլանդակվել է մահվան ճամբարում. հիմա նա իր ամուսնու՝ Ջոնիի համար այլևս անճանաչելի է: Նեյիին մարմնավորել է ռեժիսոր Փեցոլդին մշտապես ոգեշնչող դերասանուհի Նինա Հոսը:

Բեռլին վերադառնալով՝ Նեյին սկսում է փնտրել Ջոնիին. վերջինս համոզված է, որ կինը մեռած է, և Նեյին, կարծես ներհայեցողությամբ՝ նրան ներկայանում է որպես Էսթեր: Նկատելով Էսթերի նմանությունն իր կարծեցյալ մեռած կնոջը՝ Ջոնին ակնկալում է ստանալ կնոջ ժառանգությունն ու Էսթերի հետ գործարքի մեջ է մտնում. նա պատրաստվում է օգնել Էսթերին Նեյի դառնալ: Ահա այսպես, մուկ ու կատվի խաղ է սկսվում նախկին ամուսինների միջև, որտեղ Նեյին պիտի բացահայտի, թե ով է Ջոնին...

Ծրագրի մյուս ֆիլմերի նյութն ու վայրը շատ տարբեր են. Դոմինիկ Գրաֆի՝ թարմությամբ աչքի ընկնող «Միրելի քույրեր» ֆիլմը 1788-ին պոետ Ֆրիդրիխ Շիլլերի անճանական կյանքում ի հայտ եկած սիրային եռանկյունու մասին է, իսկ Ջիլլո Էնդերսի «Շյունեֆելդ բուլվարը»՝ ժամանակակից Բեռլինում ապրող ծանրամարմին մի աղջկա թուլությունների: Բոլոր ֆիլմերն էլ, սակայն, ինչ-որ կերպ միահյուսում են անձնականն ու քաղաքականը: **ՅԲՄՆ**

- «Մենք երիտասարդ ենք, մենք՝ ուժեղ», ռեժ.՝ Բուրիան Բուրբանի, «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 14.07 (21:00), «Չայաստան» կ/թ Մեծ դահլիճ, 15.07 (21:00)
- «Փյունիկ», ռեժ.՝ Քրիստիան Փեցոլդ, «Սինեմա Սթար», 14.07 (20:00), «Մոսկվա» կ/թ Կապույտ դահլիճ, 17.07 (16:00)
- «Միրելի քույրեր», ռեժ.՝ Դոմինիկ Գրաֆ, «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 15.07 (12:00)
- «Շյունեֆելդ բուլվարը», ռեժ.՝ Ջիլլո Էնդերս, «Սինեմա սթար», 15.07 (19:00), «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 17.07 (16:30)
- «Երբ մենք երազում էինք», ռեժ.՝ Անդրեաս Դրեզեն, «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 15.07 (19:00)

## Հուսահատ ժամանակներ

«Դասը», ռեժ.՝ Քրիստիան Գրոզև, Պետար Վըլչանով, Բուլղարիա/Հունաստան (Երևանյան պրեմիերա), Մոսկվա կ/թ, Կարմիր դահլիճ, 14.07 (16:30), «Սինեմա սթար», 17.07 (21:00)

Օրերից մի օր Նադեժդա անունով աշխատատեղ, ազնիվ ուսուցչուհին բացահայտում է, որ իր աշակերտներից մեկի փողը գողացել են ուրիշ երեխաները: Նա ուզում է բարոյական դաս տալ փոքրիկ գողին, բայց ոչ որ չի խոստովանում իր մեղքը:

Այդ դեպքից հետո պարզվում է, որ Նադեժդան հենց ինքը ֆինանսական լուրջ խնդիրներ ունի: Եթե նա և իր ամուսինը շատ արագ չվճարեն գրավը, ապա իրենց տունը կառգրավվի: Ամուսինը ինչ-որ այլ նպատակի համար էր ծախսել խնայած ամբողջ գումարը, ինչի հետևանքով ընտանիքը հայտնվել է անելանելի վիճակում: Կանխիկ գումար ձեռք բերելու բոլոր փորձերն ապարդյուն են անցնում, Նադեժդայի գործատուն նույնպես մտադիր չէր նրան վարձատրել: Եվ եթե նա չկարողանա որևէ ելք գտնել, ընտանիքը ստիպված կլինի փողոցում գիշերել:

Հուսահատ ժամանակներում հուսահատ քայլերի են դիմում. Նադեժդան փորձում է վաճառել իր մայրիկի ոսկե ատամները, այցելում է հորը՝ հույս ունենալով նրանից պարտք վերցնել, կապվում է ապօրինի վարկատուների հետ: Բայց արդյո՞ք նրա գտած լուծումը հուսալի է՝ նրա դասարանում



մինչ այդ կատարված միջադեպի համատեքստում:

Այս մրցանակակիր բուլղարական դրամայի ցուցադրությունը «Ոսկե ծիրանին»՝ պայմանավորված է բուլղարական կինոյի 100-րդ տարեդարձին նվիրված միջոցառման հետ: Ռեժիսորներ Պետար Վըլչանովը և Քրիստիան Գրոզևան իրենց սցենարի համար հիմք են ընդունել իրական պատմություն՝ բուլղարացի ուսուցչի մասին, ով կողոպտել էր փոքրիկ քաղաքի բանկերից մեկը: Օգտագործելով այս իրական դեպքը որպես ելակետ՝ հեղինակներն ստեղծում են մի հուզիչ պատմություն, որը կարող է պատահել յուրաքանչյու-

րիս հետ, եթե նման անհուսալի վիճակում հայտնվենք: Ֆիլմի «վավերագրական» ոճի և Նադեժդային հետևող երկար պլաների շնորհիվ «Դասը» իրական պատմության տպավորություն է թողնում: Ռեժիսորները սուր աչք ունեն մարդկային վարքագծի ու զգացմունքների համար և վարպետորեն են լարել ֆիլմի մթնոլորտը: Թվեցազուրկ ժամացույցը շուտով ծուր է դառնում: Ջարմանալի չէ, որ դերասանուհի Մարգիտա Գոշևան պարզատրվել է իր այս հզոր դերակատարման համար՝ մարմնավորելով մի կնոջ կերպար, ով երբեք չի հանձնվի՝ անկախ նրանից, թե ինչ փորձություն է բաժին ընկնում իրեն: **ՄՆ**

## Վարպետության դաս

Հուլիսի 14-ին ժամը 15:00, Փոքր թատրոնում իր վարպետության դասը կանցկացնի ֆրանսահայ հայտնի ռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր, «Ոսկե ծիրան» 12-րդ փառատոնի Մաղարկային մրցույթի ժյուրիի նախագահ Ռոբեր Գեդիգյանը:

## Անասիանություն



Տարիներ շարունակ «Ոսկե ծիրանի» շրջանակներում անցկացվող «Ռեժիսորներ առանց սահմանների» ծրագիրն արդեն փառատոնի պարտադիր մաս է դարձել: Այս տարի ծրագիրը կրացի ռուս ռեժիսոր Նատալյա Կուրյաշովայի «Հերոս պիոներները» ֆիլմը: Այն պատմում է երեք պատանի պիոներների մասին, ովքեր արդեն հասուն տարիքում հասկանում են, որ նոր հասարակարգում տեղ չկա հերոսությունների համար: Ֆիլմն արժանացել է մի շարք մրցանակների: Դիտել այն հուլիսի 14-ին՝ ժամը 14:00-ին, և հուլիսի 17-ին՝ ժամը 12:00-ին՝ «Մոսկվա» կ/թ Կարմիր դահլիճում:

## Բուլղարական ռեկորդ

Մինչ այժմ «Ոսկե ծիրանի» շրջանակներում ցուցադրված ամենահին ժապավենը թերևս Համո Բեկնազարյանի «Նամուն» էր (որը նաև այս տարվա փակման ֆիլմն է): Մակայն այսօր՝ ժամը 16:30, «Նամուն» իր տեղն ստիպված կլինի գիջել նոր ռեկորդակիրն՝ բուլղարական «Սերը խելախելություն է» կինոնկարին: Փառատոնը նշում է բուլղարական կինոյի 100-ամյակը՝ ցուցադրելով 1917թ. արտադրության այս մեկը պատմական, ինչպես նաև բոլորովին վերջերս էկրաններ բարձրացած «Դասը» կինոնկարը («Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ):


## Ստեղծարար հանդիպում

Ժամը 17:30 հրավիրում ենք Թումանյան ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հանդիպելու ամերիկացի անկախ կինոռեժիսոր Ռոբ Նիլսոնի հետ, ով արդեն առաջին տարին չէ, որ «Ոսկե ծիրանի» պատվավոր հյուր է:

## Հայաստան-Թուրքիա

Ժամը 20:00 կիսմանք, թե որոնք են Հայ-թուրքական կինոպատմության (ՀԹԿԳ) հաղթող նախագծերը:

## Երևանյան գիշերներ



Փառատոնային օրվա ավարտ՝ կինոդիտում Պողոսյան այգիներում: Ժամը 21:00-ին կցուցադրվի Արամ Շահբազյանի «Մոսկվիչ, իմ սեր» ֆիլմը, որը ներկայացված է «Հայկական համայնապատկեր» ազգային մրցույթում:



4 | գրախոսություններ

# Պայքար՝ հոգու համար

**«Սիվաս», ռեժ.՝ Քան Մյուսթեջի, Թուրքիա/Գերմանիա (Ռեժիսորներ առանց սահմանների), «Մոսկվա» կ/թ, Փոքր դահլիճ 1, 15.07 (12:00), Երևանյան գիշերներ Պողոսյան այգիներում, 16.07 (21:00)**

Ենթերի մասին ֆիլմերից շատերին բնորոշ է մարդկանց լավագույն ընկերների հավատարմության ու խելացիության սենտիմենտալ գովքը: Սակայն Քան Մյուսթեջիի դեբյուտային ֆիլմը՝ «Սիվասը», բացահայտում է շների և նրանց տերերի կենդանական հատկանիշները:

Իրադարձությունները տեղի են ունենում Թուրքիայի գյուղերից մեկում: Տասնմեկամյա Ալանը, ցանկանալով տպավորություն թողնել սիրունիկ Այշեի վրա, փորձում է ստանալ արքայազնի դերը՝ «Չյունամուշկի» դարձնելով ներկայացման մեջ: Բայց գլխավոր դերը բաժին է հասնում գյուղացեային տղային, իսկ Ալանը ստիպված էր բավարարվել թզուկի դերով: Սա նրան շատ է բարկացնում, իսկ բարկանալիս նա կարծես զագան է

դառնում, ինչպես կարելի էր կռահել նրա անունից («ալան»՝ թուրքերեն «աղյու» է նշանակում):

Ֆիլմի առաջին կեսն այս գյուղացի տղայի ամենօրյա կյանքի գրեթե էքզոտիկ նկարագրությունն է: Տեսախցիկը երկարատև կադրերով հետևում է տղային Անատոլիայի ընդարձակ բնապատկերներում, երբ դարձն է գնում, այլ երեխաների է ծաղրում կամ իրեն են ծաղրում, իսկ հետո վերադառնում է տուն՝ ծնողների ու ավագ եղբոր մոտ:

Այս ամենը ներկայացված է շատ իրատեսական ոճով (ոչ բոլոր ֆիլմերում են երեխաներն այսպես շատ հայտնում): Նույնը կարելի է ասել նաև շնամարտերի մասին դրանք ցնցող են, դաժան և արյունալի: Ալանը ակամատես է դառնում, թե ինչպես է գամի՞ր Սիվասը ծանր վերքեր ստանում մեկ այլ շան կողմից: Մարդիկ կարծելով, թե Սիվասը շունը փչել է, հեռանում են: Իսկ Ալանը մնում է և տեսնելով, թե ինչպես է վիրավորված ու արնաքամ շունը բացում իր աչքերը, տանում է նրան տուն ու կյանքի վերադարձնում: Սկզբում նա պարզապես ուրախ էր, որ ունի այդպիսի հսկա և ուժեղ շուն է օգտագործում է նրան՝ Այշեի

առջ թիրիզանալու համար: Բայց աղջիկն ուղղակի ծաղրում է տղային, որ Սիվասին շնամարտի չի տանում: Ի վերջո Ալանը հենց այդպես էլ վարվում է: Եվ երբ բարձրանում են դրույքները և մարտերը դառնում են արյունոտ, Ալանը բացահայտում է իր ստոր ու զզվելի կողմերը:

Ֆիլմը ներկայացված էր անցած տարվա Վենետիկի կինոփառատոնի մրցույթում, իսկ Ալանի դերի համար պատանի Դոդան Իզգին ստացավ լավագույն դերակատարի մրցանակը: Իրոք հենց նա է իր ուսերին կրում ֆիլմի ամբողջ ծանրությունը՝ ռեժիսորի հստակ ու վստահ ղեկավարությամբ: Ամեն պահի Իզգիի աչքերը բազմապիսի զգացմունքներ են արտահայտում՝ ասես նրա հոգում պայքար է գնում: Սիվասի հոգնած հայացքից կարելի է ենթադրել, որ գուցե ինքն էլ լավ չի հասկանում, թե ինչու է ատամները խրում ուրիշ շան կողքը: Կամ գուցե նա ընդամենը կենդանի է: Ամեն դեպքում, ֆիլմի ռեժիսորը մտորում է, որ յուրաքանչյուրի՞ նույնիսկ ամենափոքրերի հոգում քնած են շարժում ու փառասիրությունը, և որ ահեղի կամքի ուժ է հարկավոր՝ դրանց դիմակայելու համար: **ԱՎ**

## Առևտրականների աշխարհում



**«Շուկայի օրենքը», ռեժ.՝ Ստեֆան Բրիգե, Ֆրանսիա (Խաղարկային ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 14.07 (10:00), 15.07 (18:00)**

Ֆիլմն ունի երկու՝ իրարից բոլորովին տարբեր վերնագրեր. միջազգային վերնագիրը «Մարդու չափն» է և ընդգծում է գլխավոր հերոս Թիերի Թոուրդոտի կրած ճնշումները. վերջինս ջանում է միջոցներ ապահովել ընտանիքի համար՝ առանց սեփական արժանապատվությունը ոտնահարվելու: Իսկ «Շուկայի օրենքը»՝ ֆրանսիական բնօրինակ անվանումը, առավել քաղաքական շեշտադրում ունի: Թիերիի հետ պատահող ամեն բան ինչ-որ կերպ կապված է քաղաքական ազատ շուկայի գաղափարի հետ, որը չերևացող, բողոքական երևույթ է ավելի բարձր մակարդակներում: Դա են վկայում այն բարդությունները, որոնց հերոսը բախվում է աշխատանք փնտրելիս. նա ստիպված է հարգել կասկածելի հեղինակություններին, չվստահել ոչ որի, նույնիսկ իր աշխատակիցներին, քանի որ անվտանգության ոլորտում է աշխատում: Անձնակազմը քաղաքական է, իսկ քաղաքականը՝ անձնական: Վերոհիշյալ երկու անվանումներից մեկն ավելի շատ համապատասխանում է բրիտանական լիբերալ հայացքներին, իսկ մյուսն ավելի համահունչ է ֆրանսիական աշխատանքի ու արվեստի հանդեպ առավել քաղաքականացված մոտեցմանը: Երկու անվանումները միասին բարձրացնում են այն հարցը, թե միջին վիճակագրական գործազուրկի համար ինչ է նշանակում ճգնաժամային այս շրջանն ու կապիտալիստական գաղափարախոսությունը:

Կյանքը դաժան է, և սովորաբար օժանդակ դերերում հանդես եկող ֆրանսիացի դերասան Վենսան Լինդոնի մարմնավորած Թիերին երկարատև ու ծանր կադրերում նման է ծեծված շան: Լինդոնն ազդեցիկ խաղ է ցուցադրել, որ վստահորեն արժանի էր այս տարվա Կաննի կինոփառատոնում՝ տղամարդու լավագույն դերակատարման համար ստացած մրցանակին: Հասկանալի է, որ Թիերիի խոնարհության մեջ թաքնված ցասում կա, որ մի օր կարող է պայթել: Սակայն դա կնշանակի կորցնել ունեցած աշխատանքն ու երբեք չկարողանալ նոր գործ գտնել: Այդ իսկ պատճառով նա հարգալից է վերադասների հանդեպ, իսկ հայացքը՝ միշտ դեպի ներքև: Որպես սոցիալական էակ՝ շուկայի հրապարակ հիշեցնող աշխարհում Թիերին այլևս չի համապատասխանում իր իսկ չափանիշներին: **ՔԳ**

## Իլյումինատորի միջով

**«Անդրատլանտիկա», ռեժ.՝ Ֆելիքս Դյուֆուր-Լապերիեր, Կանադա (Վավերագրական ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Փոքր դահլիճ 1, 14.07 (20:00)**

Կանադացի դեբյուտանտ Ֆելիքս Դյուֆուր-Լապերիերի «Անդրատլանտիկա» էքսպերիմենտալ վավերագրական էսենս պատկերում է Անթոնիոյից Մոնտեալ 30 օրվա ճամփորդությունը բեռնատար նավով: Բայց սա վավերագրությունն չէ՝ բառի ավանդական իմաստով: Ֆիլմը ոչինչ չի փաստագրում, այն չի հետևում մեկ կամ մի քանի հերոսների՝ մակաստիների ամենօրյա կյանքին, և ոչ էլ նրանց փոխադրությունների մասին է: Ֆիլմում առիթներ կան ոչ մի երկխոսություն չկա: Միայն մեկ պահ է, որտեղ նավաստին աղոթում է, իսկ մնացած տեսարաններում խոսակցություններն անխելի են կամ անորոշ: Ինդուստրիալ ձայները շատ ավելի հստակ են, քան բառերը: Սա ավելի շուտ ստեղծագործական էքսպերիմենտ է, որը չունի որոշակի ուղերձ: Ֆիլմն արևի շողերի մասին է, որոնք ներթափանցում են իլյումինատորից՝ լուսավորելով մութ նավաստիները: Ճնշող մթնոլորտի մասին, երբ քեզ բոլորովին անզոր ես գգում ամենագոր օվկիանոսի մեջտեղում: Սա Դյուֆուր-Լապերիերի առաջին լիամետրաժ վավերագրական ֆիլմն է:

30 օր՝ շրջապատված ջրով, և այս ամենը նկարահանված է խիստ ոճականացված մոնոխրոմով: Կան նաև այդպիսի փաստական տարրեր: Երբեմն մթության միջից հայտնվում է կնոջ դեմք: Շուրթերը շարժվում են, բայց երգը չի լսվում: Հաճախ տեսնում ենք երկար ու անշտապ կադրեր, որտեղ խիստ սև-սպիտակ ալիքները գրեթե հարվածում են էկրանին: Սակայն 1 ժամ տևողությամբ այս ֆիլմի մեծ մասը նվիրված է նավատիներին, որոնք մաքրում են նավը, ներկում



նավակողերն ու տախտակամածին կրիկետ խաղում: Բնականաբար, այս ամենը ներկայանում է ռեժիսորի մտապատկերով, որը և՛ յուրօրինակ է, և՛ տարօրինակ: **ԱՎ**

նավակողերն ու տախտակամածին կրիկետ խաղում: Բնականաբար, այս ամենը ներկայանում է ռեժիսորի մտապատկերով, որը և՛ յուրօրինակ է, և՛ տարօրինակ: **ԱՎ**

## Ուժգին հավատ

**«Արծաթագոծ ջուր. Սիրիայի ինքնակարգ», ռեժ.՝ Ուսամա Սոհամեդ, Կիան Սիմավ Բեդիլլահյան, (Վավերագրական ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Փոքր դահլիճ 1, 14.07 (12:00, 16:00)**

Քաղաքական հետապնդումների պատճառով Փարիզում գտնվող սիրիացի կինոգործիչ Ուսամա Սոհամեդը ֆեյսբուքյան մի արտասովոր հաղորդագրություն է ստանում ուսուցիչ և ակտիվիստուհի՝ քրդուհի Վիան Սիմավ Բեդիլլահյանից. «Եթե ձեր տեսախցիկով այստեղ՝ Համսում լինեիք, ինչ կնկարեիք»:

Երկուսի միջև նշանակալի այս համագործակցության առիթը Ասադի անվտանգության ուժերի կողմից ձերբակալված ու կոտանքների ենթարկված մի տղայի ժապավենն էր, որ «Յուրուբ»-ում տեղադրել էին տղային տանջողները: Սոհամեդը մոտաժեստ պաշարված Համս քաղաքում Սիմավի նկարահանած նյութն ու համակցեց այն ծանր հրեառանային ու օղային ծմբակոծությունների՝ բջջային հեռախոսներով տեսագրված բազմաթիվ հատվածների հետ:

Շատ արյուն հոսեց... Քաղաքացիներից շատերը տանջանքների ու մահապատժի ենթարկվեցին, և արդեն ոչ ոք չի կարող դրա վրա աչք փակել: Այդուհանդերձ, «Արծաթագոծ ջուր. Սիրիայի ինքնակարգ» ֆիլմն ավելի է, քան հասարակ սիրիացիների կրած տառապանքի ցնցող մի վավերագրություն: Ֆիլմի խոնարհիլիստփայական նոթերը ցուցադրում են կինոյի ունեցած գործունեությունը՝ ընդդեմ պատերազմի: Կարևոր չէ, թե որքան ճնշող է մթնոլորտը. այն երբեք չի սասանում Սիմավի՝ նկարահանումը շարունակելու ուժգին հավատը:

Իրադարձությունների կենտրոնում նկարված արտասովոր այս ֆիլմը նվիրված է Օմարին՝ սիրիացի կենսախիճ փոքրիկ այն տղային, որին ֆիլմի ընթացքում Սիմավը իր տեսախցիկով հետևում է: Տղան երկրի ապագայի խորհուրդն է կրում: Նա թափառում է քաղաքով մեկ թաքնվում դիպլոմատիկադրերից ու ծաղիկ դնում հոր գերեզմանին: «Մայրիկ, նայիր՝ որքան խորն է փորած այս մեկը»,– գարմանում է նա թարմ գերեզմանի փոսին նայելով: Միջնդեմ Փարիզում, Սոհամեդը անհանգստության մեջ է իր անկախորդության պատճառով, քանի որ հայտնվել է դիտորդի դերում ու որևէ բանով չի կարող օգնել հայրենակիցներին: Ահա ևս մի պատճառ, թե ինչու է նա հետամուտ ողջ աշխարհին ցույց տալ այս պատկերները: **ՄԳ**

## Արտահայտել չաավածը

**«Զմռան վերջը», ռեժ.՝ Կիմ Դե-հուան, Զարավային Կորեա (Խաղարկային ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 14.07 (12:00, 20:00)**

Ընտանիքի փլուզման մասին ուշագրավ այս պատմության մեջ՝ թռչակի անցնող մի ուսուցիչ «տոնական» սեղանի մոտ հանկարծ հայտարարում է, որ պատրաստվում է ամուսնալուծվել չափազանց իշխող իր կնոջից: Նա միայն այդքանն ունի ասելու՝ առանց որևէ բացատրության: Տիան իրավիճակն առավել լարված է դառնում, երբ պարզվում է, որ առատ ձյան պատճառով ոչ ոք չի կարող տեղաշարժվել հարավկորեական այդ գյուղական վայրում: Նշարկայնացած ու զգուշավոր՝ ընտանիքի անդամներն սկսում են իրար շուրջ պատվել, քանի որ ստիպված են երկու գիշեր մեկ հարկի տակ անցկացնել: Հայրը չի շփվում ու փակվել է իր «խեցում»՝ ընտանիքին ևս թողնելով անօղ տարածության մեջ: Նրա կարծեցյալ սիրուհու մասին լուրերը ոչ բացահայտ են, ոչ էլ՝ հաստատված: Նա խուսափուկ պատասխաններ է տալիս՝ թեմայից դուրս մեկնաբանություններ

անելով նորոգման կարիք ունեցող տանիքի մասին: Միջնդեմ՝ նորոգման կարիք ունեն նրանց ընտանեկան փոխադրությունները:

Երիտասարդ ռեժիսոր Կիմ Դե-հուանը չաավածն արտահայտում է համարձակ մինիմալիզմի ոճով՝ օգտագործելով դժգույն մոլորագույն ներկայակամ: Նրա այս նուրբ դեբյուտը «Նոր ալիք» մրցանակին է արժանացել Պուսանի միջազգային կինոփառատոնում: Ինչպես ցույց է տալիս ռեժիսորը, հանելուկ-մարդու հետ ապրելը ծանր բան է. մտերիմ մարդը, միևնույն է, կարող է անընթացիկ լինել: Ընտանիքի հայրը վերակտում է ծխելը՝ ըմբոստացած դեռահասի պես կաշռելով միայնակ մնալու իր որոշումից: Բայց նա գաղափար անգամ չունի, թե ինչպես է օգտագործելու իր նորընծա ազատությունը: Լարվածությունն անում է հատկապես, երբ նրանք ճաշում են միասին և միմյանց համար տհաճության, անհարմարության ու չարտահայտված ցասումի առիթներ են ստեղծում. բաներ, որոնք շատ տոկոսական են շատ ընտանիքների համար: Չյունաձայն Չերտունուի ֆոնը և երաժշտության ու մեղորդամայի լիակատար բացակայությունը հրաշալիորեն համապատասխանում են իրատեսության պատկերված սառը փոխադրություններին, որոնցում զգացմունքները թաքցված են, որպեսզի հնարավոր լինի դիմակայել: **ՄԳ**



# Robert Guédiguian

Նա ոչ միայն 12-րդ «Ռուկե ծիրանի» Խաղարկային մրցույթի ժյուրիի նախագահն է, այլև հեղինակել է փառատոնի բացման ֆիլմը՝ «Խենթ պատմությունը»: Որպես ռեժիսոր՝ Գեդիգյանը հաճախ է իր ֆիլմերում գովերգել իր հարազատ Մարսելի բանվոր դասակարգին: Եվ դա այն է, ինչ նրա մոտ ամենահաջողն է ստացվում՝ աշխատավորների ամենօրյա պայքարներն ու խնդիրները պատկերելը: Գեդիգյանի հաստատուն քաղաքական հայացքները միշտ տեսանելի են նրա ֆիլմերում, սակայն ռեժիսորը մշտապես փորձում է մարդկային դեմք գտնել իր բարձրաձայնած վիճելի քաղաքական խնդիրների ընդերքում: «Խենթ պատմությունը»՝ 70-ականների ֆրանսահայ ընտանիքի պատմությունը, դրա օրինակներից է: Ցանկանալով վրեժ լուծել իր նախնիների համար՝ ընտանիքի որդին՝ Արամը, ահաբեկիչ է դառնում: Նրա գործողությունները, սակայն, մեծ վնաս են հասցնում անմեղ ժյուրին, ում մեջ այնուհետև մեծ հետաքրքրություն է ծնվում հայոց պատմության հանդեպ:

«Խենթ պատմությունը» մասամբ ոգեշնչված է Խոսե Անտոնիո Գուրիարանի *La Bomba* ինքնակենսագրական գրքից: Որքանով է ֆիլմը հիմնված ձեր անձնական հիշողությունների, զգացմունքների վրա: Չէ՞ որ դուք էլ մեծացել եք 60-70-ականների Մարսելում՝ սփյուռքահայության մի մասն եք:

Ֆիլմի ինքնակենսագրական մասը կապված է հիշողության և հիշողությունների փոխանցման հետ: Սակայն ֆիլմն հենց հիշողության մասին չէ և հատկապես ոչ իմ սեփական: Ավելի շուտ՝ հիշողության պատմության մասին է՝ թե ինչպես է այդ հիշողությունը փոխանցվում սերնդեսերունդ՝ ամսագրերի, երգերի, ընտանեկան կապերի, երբեմն նույնիսկ որոշակի ուսուցանող բաղադրատոմսերի միջոցով: Իսկ երբեմն էլ՝ զինված պայքարի միջոցով: «Խենթ պատմությունը» փորձում է ներկայացնել այդ ամենը:

Սցենարի կառուցվածքն է սկզբանե այնպիսին էր, ինչպիսին մենք տեսանք ավարտուն ֆիլմում՝ սկսվելով Թալեթ փաշայի սպանությունից, տեղափոխվելով 70-ականների Մարսել, հետո էլ՝ 2000-ականների Հայաստան:

Այո: Կարելի է ասել՝ ֆիլմը հայոց պատմության մեկ հարյուրամյակի մասին է: Պատմության մեջ հայկական փաստ գոյություն ունի, և ֆիլմը փորձում է ներկայացնել այդ փաստը մի այնպիսի ձևով, որ մինչ այդ չի եղել:

Ո՞րն է, ըստ ձեզ, պատճառը, որ ի հակառակ Հոլոքոստի՝ Հայոց եղեռնի թեման այսօր քիչ է արժարժված համաշխարհային կինոյում:

Ինձ թվում է՝ Հոլոքոստը ցեղասպանությունների գագաթնակետն է: Նույնիսկ կարելի է ասել, որ տեսականորեն Մեծ եղեռնը Հոլոքոստի նախափորձն էր: Համաշխարհային կինոն այդքան մեծ ուշադրություն է հատկացրել Հոլոքոստին ոչ միայն այն պատճառով, որ դա մեծ ողբերգություն էր, այլև որովհետև դա չափազանց լավ պատրաստված, ծրագրավորված, ժամացույցի մեխանիզմի պես մտածված ու համակարգված եղելություն էր: Հրեաներին գտնում և ոչնչացնում էին ողջ Եվրոպայով մեկ՝ հասնելով մինչև Հունգարիա և նույնիսկ Ուկրաինա: Պատճառներից մեկը նաև այն է, որ դա տեղի է ունեցել հենց Եվրոպայում՝ քաղաքակրթությունների օրրանում: Դրա համար էլ եվրոպացիներն այս հարցը շատ են քննարկում, ուսումնասիրում:

Գրքում ամեն ինչ ներկայացված է Գուրիարանի տեսակետից, սակայն ֆիլմում դուք որոշեցիք մի քանի դիտարկումներից պատմել այս պատմությունը:

Ընդհանրապես բավականին արագ եմ աշխատում, գրեթե ամեն տարի ֆիլմ եմ թողարկում: Սակայն «Խենթ պատմությունը» միակ կինոնկարն է, որ երկար տարիներ սպասեցի, որ բոլոր քաղաքացիները ճիշտ իրենց տեղը նստեն: Գուրիարանը, իհարկե, ինձ շատ է օգնել: Նրա կենսագրությունը բացառիկ է, և ինքն էլ մի բացառիկ անձնավորություն է: Գուրիարանի պատմությունն ինձ ի սկզբանե շատ հուզիչ էր թվացել, բայց ժա-



մանակ էր պետք, որպեսզի ես կարողանայի նոր գաղափարներ գտնել, ստանձնել դրանք ու կառուցել ինձ երևացող ֆիլմը: Ես ուզում էի համամարդկային պատմություն պատմել: Դրա համար էլ ֆիլմի ընտանիքը հորինեցի: Եվ որպեսզի համդիաստեպ ճիշտ ընկալի Եղեռնը և հայոց հարյուրամյա գայության պատմությունը, ֆիլմում ընդգրկեցի նաև Թալեթ փաշայի սպանության և Թեհլերյանի դատավարության դրվագը, որը ֆիլմում շուրջ 20 րոպե է տևում: Բայց դա հարկավոր է՝ այս մեծ ողբերգությունը բացատրելու համար:

Ճիշտ կլինի ասել, որ ֆիլմը նկարահանելիս նաև քաղաքական նպատակներ էիք հետապնդում:

Լիովին ճիշտ է: Ինձ համար չկա այնպիսի ստեղծագործություն, որը գուրկ է քաղաքական կամ սոցիալական նրբերանգներից: Արվեստի գործը չի կարող ընդամենն արվեստի գործ լինել: Այն պետք է աշխարհին մի բան ասի:

Որոշ գրախոսությունների հեղինակներ գրում են՝ իբր ֆիլմն ահաբեկչության արգարացում է:

(*Տի Թաթ* ;) Ֆիլմն ուղղակի զինված պայքարի հարցն է բարձրացնում: Ես այդ խնդրի շուրջ շատ եմ մտորել ու մի քանի ֆիլմերում այն ուսումնասիրել եմ, օրինակ՝ «Հանցագործների բանակում»: Իմ խորին համոզմունքն է, որ կան զինված պայքարներ, որոնք արդարացված են և որոնք արդարացված չեն: Չինված դիմադրության հենց ներսում էլ կան գործողություններ, որոնք արդար են կամ անարդար: Ես միշտ դեմ եմ եղել քաղաքացիական հասարակության դեմ բռնությանը: Բայց միշտ համաձայն եմ եղել այն գործողություններին, որոնք նշանավոր են կոնկրետ մարդկանց՝ քաղաքական գործիչների դեմ: Ճիշտ հասկացե՛ք՝ աշխարհում ոչ մի խնդիր չի կարող արդարացնել անմեղների սպանությունը: Սակայն երբեմն պետք է լինում պայքարել անիրավ պետության դեմ, ոստիկանության դեմ, և այդ դեպքերում ձեռք գեղբ վերցնելուց բացի՝ այլ միջոց չկա: ԱՎ:

«Խենթ պատմություն», «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 19.07 (18:00)

Not only is he the president of this year's Golden Apricot Feature Competition jury, but Robert Guédiguian also co-wrote and directed the opening film *Don't Tell Me the Boy Was Mad*. As a director, Guédiguian has often sung the praises of the working classes of his home town Marseille. And indeed that's what he does best – depicting the struggles and issues of workers. His strong political beliefs are always transparent in his films, but he also tries to find a human face underneath the controversial political issues he brings up. *Don't Tell Me the Boy Was Mad*, the story of an average French-Armenian family in the late 70's, is an example of that. Wishing to avenge his ancestors, the family's son Aram becomes a terrorist. His actions inadvertently hurt Gilles, an innocent bystander who subsequently becomes fascinated with Armenian history.
